ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 Երևան, Վազգեն Սարգսյան 3/8, հեռ. 594-015
էլ. փոստ armen.gevorgyan@justice.am

№ 10/23/2251-16

«02» 03 2016թ.

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ՏԻԿԻՆ Լ. ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր՝ 2016 թվականի փետրվարի 24-ի 10FE-4913-0A37 թվակիր գրության՝ տեղեկացնում եմ, որ 2016 թվականի հունվարի 1-ից առ այսօր ՀՀ արդարադատության նախարարությունն էլեկտրոնային տարբերակով ստացել է 97 հարցում, որոնցից 91-ին տրվել է գրավոր, 1-ին՝ բանավոր պատասխաններ, իսկ 5-ը՝ վերահասցեագրվել է: ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունը 2016 թվականին ամփոփել է 2015 թվականին նախարարությանն ամենաշատն ուղղված հարցերն ու դրանց պատասխանները հրապարակել ԱՆ ինտերնետային պաշտոնական կայքի «Ընդունելություն» բաժնի «Հաճախ տրվող հարցեր» ենթաբաժնում (**http://.moj.am/questions/browse**):

Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայում ՀՀ արդարադատության նախարարությունը քայլեր է ձեռնարկում ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1204–Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 6-րդ կետի պահանջների կատարման ուղղությամբ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատարող՝ Հայկ Բարսեղյան
ՀՀ ԱՆ աշխատակազմի տեղեկատվության և
հասարակայնության հետ կապերի վարչություն
Հեռ.՝ 59 40 60